Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թ.
մարտի 31-ի նիստի N 12
արձանագրային որոշման

## «ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ 2015-2017 ԹԹ. ՄԱՆՐԱՄԱՍՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| Ոլորտ | Միջոցառում | Կատարվող աշխատանք | Պատասխանատու | Աշխատանքի նկարագրություն | Ժամանակա-ցույց | Արդյունք | Միջազգային կառույցների աջակցություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ | | | | | | | |
| | 1.1 ՀՀ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքում (ԲՀՕ) փոփոխությունների և/կամ լրացումների | - ԲՀՕ-ում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում | ՀՀ ՖՆ , ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով | «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում և, ըստ անհրաժեշտության, հարակից այլ օրենքներում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ, | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | իրականացում | -ԲՀՕ-ում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի փաթեթի շրջանառում կարծիքների և դիտողությունների հավաքագրում, հարակից օրենքներում փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկությունների ստացում | ՀՀ ՖՆ | որով կապահովվեն անհրաժեշտ իրավական հիմքեր ԾԲ ամբողջական ներդրման համար: Մասնավորապես, փոփոխություններն ուղղված կլինեն ֆորմալ առումով ծրագրային դասակարգումը որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում սահմանելուն, ԾԲ կիրառության առանձնահատկությունները բյուջետային ցիկլի բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում, կատարում, հաշվետվողականություն), այդ գործընթացներում ներգրավված հիմնական կողմերը դրանց իրավասությունների և պարտականությունների շրջանակները, ինչպես նաև բյուջետային գործընթացում ԾԲ առնչվող հիմնական որոշումները և հիմնական տեղեկատվական հոսքերը սահմանելուն: Փոփոխություններն ուղղված կլինեն նաև ԾԲ ամբողջական անցման պարագայում | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | |
| | | -ԲՀՕ-ում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի փաթեթի վերանայում (լրամշակում, համապատասխան բացատրական նյութերի կազմում), անհրաժեշտության դեպքում նաև հարակից օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի ձևավորում | ՀՀ ՖՆ | | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | -ԲՀՕ-ում և անհրաժեշտության դեպքում նաև հարակից օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարություն | ՀՀ ՖՆ | բյուջետային փաստաթղթերում բյուջետային տեղեկատվության ներկայացման կառուցվածքը և դրա դետալացման մակարդակը, ինչպես նաև հարկաբյուջետային հիմնական կանոնները ԾԲ ենթատեքստում (վերաբաշխումներ, կրճատումներ և այլն) սահմանելուն: | Օգոստոս 2017 | | |
| | | - ԲՀՕ-ում և անհրաժեշտության դեպքում նաև հարակից օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում ՀՀ Ազգային ժողով | ՀՀ կառավարության աշխատակազմ | | Սեպտեմբեր 2017 | | |
| | | - ԲՀՕ-ում և անհրաժեշտության դեպքում նաև հարակից օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի ընդունում ՀՀ ԱԺ կողմից | ՀՀ ԱԺ-ի ֆինանսավար-կային և բյուջետային հարցերի հանձնաժողով | | Դեկտեմբեր 2017 | Օրենքը (օրենքները) ընդունված են ՀՀ ԱԺ կողմից | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1.2 «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և/կամ լրացումների մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող հիմնական իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների իրականացում | ԲՀՕ-ում և անհրաժեշտության դեպքում նաև հարակից օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին ընդունված օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում և ներկայացում | ՀՀ ՖՆ | ԾԲ ամբողջական ներդրման նպատակով ԲՀՕ-ում և, ըստ անհրաժեշտության, հարակից այլ օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների ընդունումից հետո, դրանցից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն դրանց կիրարկումն ապահովող այլ իրավական ակտերում | Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում | | |
| | | - ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացում | ՀՀ ՖՆ, ՀՀ այլ պետական մարմիններ | | Համաձայն ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամանակա-ցույցի | Օրենքի կիրարկում ապահովող օրենսդրական ակտերում փոփոխություններ ը կատարված են | |
| ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԾԲ միասնական ուղեցույցի մշակում | 10.1.Ոլորտային ռազմավարությունների մշակման մեթոդական ուղեցույցների մշակում | ՀՀ ՖՆ | | Հունվար 2016 | Ուղեցույցը մշակված է | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | 3.1 ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկի մշակում | ՀՀ ՖՆ | ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկը կներառի ԾԲ գաղափարախոսությունը, սկզբունքները և հիմնական բաղադրիչները, այդ գաղափարախոսության ներքո բյուջետային ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների (ներառյալ արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող) սահմանման, ձևավորման և դասակարգման կանոնները: | Հունիս 2016 | Ձեռնարկը մշակված է | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3.2 ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման մեթոդական ձեռնարկի մշակում | ՀՀ ՖՆ | ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման մեթոդական ձեռնարկը կներառի բյուջետային ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների (ներառյալ արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող)համար արդյունքային չափորոշիչների համակարգը, դրանց սահմանման, դասակարգման և ձևավորման կանոնները: | Հուլիս 2016 | Ձեռնարկը մշակված է | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3.5 ՀՀ ԱԺ, ՀՀ կառավարության և ՀՀ պետական մարմինների կողմից ԾԲ ձևաչափով պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերի ձևաչափերի և դրանցում տեղեկատվության ներկայացման պահանջների մշակում | ՀՀ ՖՆ, ՀՀ ԱԺ, ՀՀ ՎՊ, ՀՀ պետական այլ մարմիններ | ՀՀ ԱԺ, ՀՀ կառավարությունը, ՀՀ ՖՆ և ՀՀ պետական մարմինները ընդունում են տարբեր մակարդակի բյուջետային որոշումներ, որի համար անհրաժեշտ է տարբեր բնույթի, կառուցվածքի և մանրամասնության տեղեկատվություն: Այս առումով, ԾԲ տեղեկատվությունը բավարար դիվերսիֆիկացված չէ ԾԲ գործընթացի հիմնական դերակատարների միջև: ԾԲ ամբողջական ներդրումը կպահանջի վերոհիշյալ մարմիններ ԾԲ ձևաչափով պաշտոնապես ներկայացվող, այդ մարմինների կողմից ԾԲ ձևաչափով հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերի ձևաչափերի և բովանդակության վերանայումներ:<br>Սույն միջոցառման շրջանակում կհստակեցվի ԾԲ տեղեկատվության հիմնական սպառողների համար այդ տեղեկատվության ներկայացման շրջանակներն ու դետալացման մակարդակը՝ ելնելով | Սեպտեմբեր 2016 | Բյուջետային ձևաչափերը և դրանց լրացման պահնջները մշակված են | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վերջիններիս դերերից և պահանջներից, ինչպես նաև կմշակվեն ԾԲ ձևաչափով պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերի ձևաչափերի և դրանցում տեղեկատվության ներկայացման պահանջները: | | | |
| | | 3.6 ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի կազմման մեթոդական ցուցումների համապատասխանեցում ԾԲ պահանջներին: | ՀՀ ՖՆ | Կվերանայվեն ՀՀ ՖՆ կողմից պետական մարմիններին տրամադրվող ՄԺԾԾ և բյուջետային հայտերի կազմման մեթոդական ցուցումները՝ դրանցում ներկայացված տեղեկատվությունը, ընթացակարգերն ու ձևաչափերը ամբողջությամբ կհամապա-տասխանեցվեն վերոնշյալ միջոցառումների շրջանակներում մշակված ԾԲ մեթոդաբանության պահանջներին: | Դեկտեմբեր 2016 | Մեթոդական ցուցումները վերանայված են | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | 5.1 Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցների մշակում | ՀՀ ՖՆ | Ծախսակազմման ընդհանուր ուղեցույցները կնկարագրեն ծախսակազմման գործընթացը, դրա փուլերը, ծախսերի օբյեկտների սահմանման, ծախսերի դասակարգման և վերագրման կանոնները և դրանց կիրառման առանձնահատկությունները ԾԲ տեսանկյունից: | Հոկտեմբեր 2016 | Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ուղեցույցները մշակված են | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5.2 Առանձին ծրագրերի/միջոցա-ռումների կամ ոլորտների համար բյուջետային ծրագրերի ծախսակազմման մանրամասն ուղեցույցների մշակում (ըստ անհրաժեշտության) | ՀՀ ՖՆ, ՀՀ պետական մարմիններ | Վերոհիշյալ միջոցառման շրջանակում մշակված բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցների հիման վրա, ըստ անհրաժեշտության, առանձին ծրագրերի, միջոցառումների կամ ոլորտների համար կմշակվեն ծախսակազմման մանրամասն ուղեցույցներ: | Դեկտեմբեր 2017 | Ընտրված ծրագրերի/միջոցառումների համար բյուջետային ծրագրերի ծախսակազմման մանրամասն ուղեցույցները մշակված են (ըստ անհրաժեշտու-թյան) | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԾԲ միասնական ուղեցույցի ընդունում | | ՀՀ ՖՆ , ՀՀ այլ պետական մարմիններ | | Դեկտեմբեր 2017 | ԾԲ միասնական ուղեցույցը ընդունված է | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| ԾՐԱԳՐԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ | | | | | | | |
| | Ծրագրերի կառուցվածքի և ծրագրային տեղեկատվության վերանայում/թարմացում համաձայն մեթոդաբանության պահանջների | 10.3 Ոլորտային ռազմավարական ծրագրերի վերանայում և համապատասխանեցում մեթոդական ուղեցույցների պահանջներին | ՀՀ ՖՆ, ՀՀ այլ պետական մարմիններ | 10.1 կետով մշակված մեթոդաբանության պահանջները պարտադիր կարգով կկիրառվեն 2017 թվականի հունվարից հետո մշակվող/վերանայվող ոլորտային ռազմավարական ծրագրերը մշակելիս: | Սկսած հունվար 2017 | Նոր մշակված ոլորտային ռազմավարական ծրագրերը համապատասխանում են մեթոդական ուղեցույցների պահանջներին | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 4.1 Բյուջետային ծրագրերի և միջոցառումների կառուցվածքի ու բովանդակության համապատասխանեցում մեթոդաբանության պահանջներին | ՀՀ ՖՆ, ՀՀ այլ պետական մարմիններ | Կուսումնասիրվեն ներկայիս բոլոր բյուջետային ծրագրերն ու միջոցառումները (ներառյալ արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող) և դրանց կառուցվածքն ու բովանդակությունը կհամապատասխանեցվի ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկի և ծրագրային դասակարգման պահանջներին: Անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կկատարվեն նաև համապատասխան ծրագրերի արդեն իսկ մշակված անձնագրերում: | Դեկտեմբեր 2017 | Բյուջետային ծրագրերը ամբողջությամբ համապատաս-խանում են մեթոդաբանու-թյան պահանջնե-րին: Ծրագրերի անձնագրերը լրամշակված են | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 4.2 Բյուջետային ծրագրերի և միջոցառումների արդյունքային ցուցանիշների համապատասխանեցում մշակված մեթոդաբանության պահանջներին | ՀՀ ՖՆ, ՀՀ այլ պետական մարմիններ, ՀՀ ԱԺ ֆինանսավրկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով, Բյուջետային գրասենյակ | Կուսումնասիրվեն ներկայիս բյուջետային ծրագրերի և միջոցառումների (ներառյալ արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող)գծով սահմանված արդյունքային ցուցանիշները և դրանց կազմն ու բովանդակությունը կհամապատասխանեցվի ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման մեթոդական ձեռնարկի պահանջներին: Անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կկատարվեն նաև համապատասխան ծրագրերի արդեն իսկ մշակված անձնագրերում: | Դեկտեմբեր 2017 | Բյուջետային ծրագրերի և միջոցառումների արդյունքային ցուցանիշները համապատաս-խանում են մեթոդաբանու-թյան պահանջներին: Ծրագրերի անձնագրերը լրամշակված են | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 6.1 Ընտրված պետական մարմիններում կառավարման և ներքին հսկողության (ներառյալ ներքին հաշվետվողականութ յան) համակարգերի, ինչպես նաև ներքին կառուցվածքների և գործառույթների ուսումնասիրություն (նաև ԾԲ ամբողջական ներդրման տեսանկյունից) | Ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում | ՀՀ ՖՆ | Պետական մարմիններում ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրման նպատակով կուսումնասիրվեն ընտրված պետական մարմինների կառավարման ու ներքին հսկողության (ներառյալ ներքին հաշվետվողականության)համակ արգերը, ինչպես նաև ներքին կառուցվածքներն ու գործառույթները, պարզելու համար վերջիններիս համապատասխանությունը ՖԿՀ և ԾԲ պահանջներին: Բյուջետային գործընթացի շրջանակներում պետական մարմինների կողմից բյուջետային որոշումների կայացման հարցում ուշադրություն կդարձվի կառավարչական հաշվետվողականության և պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, այդ թվում պետական մարմիններում ծրագրերի | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | Ուսումնասիրությա ն տեխնիկական առաջադրանքը մշակված է | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | Ուսումնասիրության նպատակով պետական մարմինների ընտրություն ըստ տեխնիկական առաջադրանքի | ՀՀ ՖՆ | | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | Պետական մարմինների ընտրությունը կատարված է | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ուսումնասիրության իրականացում և պետական մարմինների կառավարման և ներքին հսկողության համակարգերի և ներքին կառուցվածքների վերանայման/բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակում | ՀՀ ՖՆ , ընտրված պետական մարմիններ | պատասխանատուների ինստիտուտի ձևավորմանը | Դեկտեմբեր 2016 | Առաջարկություննների փաթեթը առկա է | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | Պետական մարմիններում բյուջետային ծրագրերի կառավարման համակարգին ԾԲ տեսանկյունից ներկայացվող հիմնական պահանջների մշակում | ՀՀ ՖՆ | | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներ-ում | Առաջարկություննների փաթեթը առկա է | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 6.2 Պետական մարմիններում կառավարման և ներքին հսկողության համակարգերի, ինչպես նաև ներքին կառուցվածքների և գործառույթների բարելավում | Պետական մարմիններում կառավարման և ներքին հսկողության համակարգերի, ինչպես նաև ներքին կառուցվածքների և գործառույթների բարելավում | ՀՀ ՖՆ, այլ պետական մարմիններ | Ուսումնասիրության արդյունքներով, ՖԿՀ համակարգի ներդրման շրջանակներում, ըստ անհրաժեշտության կվերանայվեն պետական մարմիններում կառավարման և ներքին հսկողության համակարգերը, ինչպես նաև ներքին կառուցվածքները և գործառույթները | ՊՖԿՀ ռազմավարությամբ սահմանված ժամանակացույցին համապատասխան | Անհրաժեշտ ֆունկցիոնալու-թյունն ապահովված է, պահանջվող հսկողություն-ներն առկա են | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳԾՈՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 7.1 ԾԲ ամբողջական ներդրման տեսանկյունից ՀՀ պետական մարմիններում մարդկային ռեսուրսների գծով առկա կարողությունների գնահատում | Ուսումնասիրության/գնահատման առաջադրանքի մշակում | ՀՀ ՖՆ | Կուսումնասիրվեն և կգնահատվեն ԾԲ ամբողջական ներդրման տեսանկյունից ՀՀ ՖՆ և պետական մարմիններում առկա կարողությունները մարդկային ռեսուրսների առումով: Ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ՖՆ-ում, ՀՀ ՖՆ ուսուցման կենտրոնում և ընտրված պետական մարմիններում, որոնց թվում առնվազն կներառվեն պետական մարմիններ, որոնք ունեն զգալի քանակությամբ բյուջետային ծրագրեր/միջոցառումներ, ինչպես նաև մեծաքանակ ենթակա կազմակերպություններ: Ուսումնասիրությունները | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | Առաջադրանքը մշակված է | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ուսումնասիրության/գնահատման իրականացում | ՀՀ ՖՆ, պետական այլ մարմիններ | կներառեն ինչպես առկա մարդկային կարողությունները քանակային առումով, այնպես էլ մասնագիտական գիտելիքների և գործնական կարողությունների առումով: Միաժամանակ, կգնահատվեն նաև ԾԲ և հարակից ոլորտներում անձնակազմի վերապատրաստումների կարիքները և ՀՀ ՖՆ ուսուցման կենտրոնի կարողությունները (լսարանային պայմաններ, անձնակազմ, վերապատրաստման ծրագրեր)՝ ԾԲ ոլորտում վերապատրաստումներ իրականացնելու առումով: | Դեկտեմբեր 2016 | Ուսումնասիրու-թյան վերաբերյալ հաշվետվու-թյուն | |
| | 7.2 ԾԲ ամբողջական ներդրման տեսանկյունից ՀՀ պետական մարմիններում մարդկային ռեսուրսների գծով առկա կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրի հաստատում | Ուսումնասիրության արդյունքների հիման վրա մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման միջոցառումների ծրագրի նախագծի մշակում | ՀՀ ՖՆ | Ուսումնասիրության արդյունքներով կմշակվի և կընդունվի ՀՀ ՖՆ և պետական մարմիններում ԾԲ ներդրման նպատակով կարողությունների զարգացման գործողությունների ծրագիրը: | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | Մարդկային ռեսուրսների զարգացման միջոցառումների ծրագրի նախագիծը մշակված է | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Միջոցառումների ծրագրի ներկայացում ՀՀ կառավարության հաստատմանը | ՀՀ ՖՆ, պետական այլ մարմիններ | | Փետրվար 2017 | Միջոցառումների ծրագիրը հաստատված է | |
| | 7.3 ՀՀ պետական մարմիններում մարդկային ռեսուրսների գծով առկա կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ ՖՆ և ՀՀ պետական մարմինների մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում | ՀՀ ՖՆ, ՀՀ պետական այլ մարմիններ | ՀՀ ՖՆ և պետական մարմիններում ԾԲ ներդրման նպատակով կարողությունների զարգացման գործողությունների ընդունված ծրագրի իրագործումը կիրականացվի ըստ ծրագրով սահմանված ժամանակացույցի: Ծրագիրը կընդգրկի նաև ՀՀ պետական մարմինների ոլորտային ռազմավարությունների մշակման և վերանայման համար պատասխանատու անձնակազմի համար կազմակերպվող վերջիններիս կարողությունների զարգացմանն ուղղված համապատասխան վերապատրաստման դասընթացները: | Միջոցա-ռումների ծրագրով հաստատված ժամանակա-ցույցին համապա-տասխան | | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | -10.2 Ոլորտային ռազմավարությունների մշակման մեթոդական ուղեցույցների վերաբերյալ ՀՀ պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստումների իրականացում | ՀՀ ՖՆ, ՀՀ այլ պետական մարմիններ | | Միջոցա-ռումների ծրագրով հաստատված ժամանակա-ցույցին համապա-տասխան | | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 7.4 ԾԲ ոլորտում ՀՀ ԱԺ աշխատակազմի և պատգամավորների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (ըստ ցանկության) մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված մասնագիտական ուսուցումների և/կամ վերապատրաստումների իրականացում | ՀՀ ԱԺ-ի ֆինանսավար-կային և բյուջետային հանձնաժողով, Բյուջետային գրասենյակ, ՀՀ ՖՆ | Միջոցառման շրջանակներում ԾԲ ոլորտում ՀՀ ԱԺ աշխատակազմի և պատգամավորների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով կկազմակերպվեն համապատասխան մասնագիտական ուսուցումներ և/կամ վերապատրաստումներ (ներառյալ ՀՀ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար: Վերջիններս առնվազն կընդգրկեն ԾԲ համակարգը և մեթոդաբանությունը, ինչպես նաև խորհրդարանական հսկողության շրջանակներում կիրառվող վերլուծական գործիքակազմն ու դրա կիրառությունը ԾԲ տեսանկյունից | Հոկտեմբեր 2017 | | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| **ՀՀ ՖՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԼՈԿԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ** | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 8.1 ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի կառուցվածքային, ֆունկցիոնալ և կարողությունների ուսումնասիրություն ԾԲ ամբողջական ներդրման տեսանկյունից | Ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում | ՀՀ ՖՆ | Կիրականացվի ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի կառուցվածքային, ֆունկցիոնալ և կարողությունների ուսումնասիրություն՝ ԾԲ ամբողջական ներդրման տեսանկյունից | Հոկտեմբեր 2015 | Մշակված առաջադրանք | ԳՄՀԸ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | Ըստ տեխնիկական առաջադրանքի ուսումնասիրության իրականացում | ՀՀ ՖՆ | | Դեկտեմբեր 2015 | Ուսումնասիրու-թյան հաշվետվություն | ԳՄՀԸ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 8.2 ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի կարողությունների զարգացման ծրագրի հաստատում | Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի ըստ ԾԲ պահնջների կառուցվածքային և ֆունկցիոնալ միջոցառումների ծրագրի նախագծի մշակում և հաստատում | ՀՀ ՖՆ | Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կմշակվի և կհաստատվի ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի ըստ ԾԲ պահինջների կառուցվածքային և ֆունկցիոնալ միջոցառումների ծրագրի նախագիծը, որը կներառի համապատասխան միջոցառումները և դրանց ժամանակացույցը: | Մայիս 2016 | Հաստատված ծրագիր | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | 8.3 ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի ֆունկցիոնալության բարելավում և կարողությունների զարգացում հատատված ծրագրին համապատաս-խան | -ՀՀ ՖՆ Բյուջետային բլոկի ֆունկցիոնալության բարելավման աշխատանքների իրականացում ըստ ծրագրի | ՀՀ ՖՆ | | Միջոցա-ռումների ծրագրով հաստատ-ված ժամանակա-ցույցին համապա-տասխան | Անհրաժեշտ ֆունկցիոնա-լությունը ապահովված է, պահանջվող կարողություններ ձևավորված են | Միջազգային կառույցներ - կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| ԾԲ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Լիարժեք ծրագրային բյուջետավորման աջակցմանն ուղղված՝ ՏՏ համակարգերի կատարելագործումն երի գործառույթների, տեխնիկական և օգտագործման պահանջների սահմանում | - 12.2 Նախքան ԿՖԿՏՀ-ի ներդրումը, բյուջեի պլանավորման, կատարման, հաշվետվողակա-նության և այլ գործառույթներն ավտոմատացնող առկա ծրագրային համակարգերում ԾԲ տեղեկատվության ներկայացման և տվյալների մշակման գործառույթների ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն (սահմանված տեխնիկական բնութագրիչների ներդրման տեսանկյունից) | ՀՀ ՖՆ | Քանի որ ԿՖԿՏՀ-ի մշակումն ու ներդրումը հանդիսանում է երկարատև գործընթաց, նախքան այդ աշխատանքների ավարտը կիրականացվի բյուջեի պլանավորման, կատարման, հաշվետվողականության և այլ գործառույթներն ավտոմատացնող ծրագրային համակարգերում ԾԲ տեղեկատվության ներկայացման և տվյալների մշակման գործառույթների ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրության նպատակն է լինելու պարզել այդ համակարգերում ԾԲ տեղեկատվության ներկայացման և տվյալների մշակման համապատասխան գործառույթների ներդրման հնարավորությունները: Ուսումնասիրության արդյունքներով կպարզվեն այդ համակարգերում առկա հնարավորությունները և ԾԲ պահանջներին դրանց ադապտացման հնարավոր ուղիները | Մարտ 2017 | Ուսումնասի-րության հաշվետվություն | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | - 12.1 ԿՖԿՏՀ- ում ԾԲ տեսանկյունից կարևոր առանձնահատկու-թյունների և տեղեկատվության սահմանում | ՀՀ ՖՆ | ԿՖԿՏՀ-ի ֆունկցիոնալության և տվյալների շրջանակների տեսանկյունից ԾԲ լրացուցիչ պահանջների ապահովման նպատակով ԿՖԿՏՀ կառուցվածքում կներառվեն ԾԲ առումով կարևոր առանձնահատկություններն ու անհրաժեշտ տեղեկատվությունը | ԿՖԿՏՀ-ի ներդրման փուլում | Առանձնահատ-կությունները սահմանող հաշվետվություն կամ տեխնիկական առաջադրանք | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | 12.3 Բյուջետային գործընթացի առանձին փուլերում կիրառվող հիմնական ծրագրային ապահովումների համապատաս-խանեցում ԾԲ պահանջներին | - Ըստ ուսումնասիրության արդյունքների և ԾԲ մեթոդաբանության պահանջների տեխնիկական առաջադրանքների մշակում և հաստատում | ՀՀ ՖՆ | Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ բյուջետային գործընթացի առանձին փուլերում կիրառվող հիմնական ծրագրային ապահովումները կվերանայվեն և դրանցում առկա գործառույթներն ու տեղեկատվությունը կհամապատասխանեցվի ԾԲ պահանջներին՝ ԾԲ ամբողջական ներդրումը արդյունավետ կերպով իրականացնելու համար: | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | Միջազգային կառույցներ-կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | - Բյուջետային գործընթացի առանձին փուլերում կիրառվող հիմնական ծրագրային ապահովումների համապատասխանեցում ԾԲ պահանջներին | ՀՀ ՖՆ | | Դեկտեմբեր 2017 | | Միջազգային կառույցներ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| **ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ** | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 13.1 Կատարողականի աուդիտի համար ժամանակավոր ձեռնարկների մշակում | -Վերահսկիչ պալատի աուդիտորների վերապատրաստումներ՝ ընդհանուր ԾԲ սկզբունքների և մեթոդաբանության, ինչպես նաև կատարողականի աուդիտի սկզբունքների և ընդհանուր մեթոդաբանության գծով | ՀՀ ՎՊ | ԾԲ պահանջներից բխող՝ ՀՀ ՎՊ առկա մասնագիտական կարողությունները զարգացնելու նպատակով կմշակվեն կատարողականի աուդիտի ժամանակավոր ձեռնարկներ և կիրականացվեն ՎՊ անձնակազմի վերապատրաստումներ կատարողականի աուդիտի մեթոդաբանության վերաբերյալ: Այդ աշխատանքները պետք է համակարգվեն և հարմոնիզացվեն ՀՀ ՎՊ-ում ISSAI 3000-3100 ստանդարտների համաձայն Կատարողականի աուդիտի ձևավորման գործողությունների ծրագրին: Բացի այդ, աշխատանքները կներառեն նաև ողջ ընթացքում պարբերական փորձնական աուդիտների իրականացումը | Համակարգող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | - |
| | | -Վերապատրաստում անցած Վերահսկիչ պալատի աուդիտորների կողմից, պետական գերատեսչությունների հետ համատեղ, կատարողականի պիլոտային աուդիտների անցկացում | ՀՀ ՎՊ, պետական մարմիններ | | Համակար-գող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | - |
| | | -Վերապատրաստում-ների և կատարողականի պիլոտային աուդիտների արդյունքում Կատարողականի աուդիտի ձեռնարկի մշակում | ՀՀ ՎՊ, | | Դեկտեմբեր 2016 | Ձեռնարկը հաստատվել է ՀՀ ՎՊ կողմից | - |
| | 13.2 Կատարողականի աուդիտի մեթոդաբանության վերաբերյալ | - Կատարողականի աուդիտի ուսումնական մոդուլների պատրաստում | ՀՀ ՎՊ, | Կատարողականի աուդիտի մշակված ձեռնարկի հիման վրա կմշակվեն համապատասխան ուսումնական մոդուլները և կիրարականացվեն ՀՀ ՎՊ | Համակար-գող խմբի կողմից սահմանած ժամկետներում | | ԳՄՀԸ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | աուդիտորների վերապատրաստ-ման կազմակերպում | - Կատարողականի աուդիտի գծով վերապատրաստումների ծրագրի հաստատում և վերապատրաստումների կազմակերպում | ՀՀ ՎՊ, | աուդիտորների վերապատրաստումները: | Սկսած Հունվար 2017-ից | Վերապատ-րաստված աուդիտորների քանակը | |
| | 13.3 ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ ներառյալ ԾԲ համակարգի և կատարողականի աուդիտի ներդրման տեսանկյունից անհրաժեշտ աշխատանքների իրականացում | - ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին օրենքի նախագծի մշակման մասնակցություն՝ ծրագրային բյուջետավորման և կատարողականի աուդիտի ներդրման տեսանկյունից | ՀՀ ԱԺ, ՀՀ ՎՊ, ՀՀ ՖՆ, ՀՀ Կառավարության աշխատակազմ, ՀՀ ԿԲ, ՀՀ արդարադատության նախարարություն | ԾԲ համակարգի և կատարողականի աուդիտի ներդրման տեսանկյունից կուսումնասիրվի նաև ՀՀ Վերահսկիչ պալատի մասին ՀՀ օրենքը և անհրաժեշտության դեպքում դրանում կիրականացվեն համապատասխան փոփոխություններ և/կամ լրացումներ | Մայիս 2016 | | ԳՄՀԸ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |
| | | - ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին օրենքում ըստ անհրաժեշտության փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և քննարկում ՀՀ ԱԺ-ում | ՀՀ ԱԺ ֆինանսավար-կային և բյուջետային հանձնաժողով | | Դեկտեմբեր 2016 | Օրենքի ուսումնասի-րության վերաբերյալ հաշվետվություն<br>Օրենքում փոփոխություն-ներ և/կամ լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծ (ըստ անհրաժեշտու-թյան) | ԳՄՀԸ<br>- կարճաժամկետ տեխնիկական աջակցություն/ խորհրդատվություն |

»: